



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Բոլոսել,  
SEC(2010) 516

Հանձնաժողովի աշխատակազմի աշխատանքային փաստաթուղթ,

*որը կցվում է*

Եվրոպական խորհրդարանին և խորհրդին հանձնաժողովի հաղորդագրությանը  
Եվրոպական Հարևանության Քաղաքականության (ԵՀՔ) ընդհանուր գնահատում

*Եվրոպական Հարևանության Քաղաքականության Իրականացումը 2009թ.*

**Հայաստանի առաջընթացի հաշվետվությունը**

{COM(2010) 207}  
{SEC(2010) 513}  
{SEC(2010) 514}  
{SEC(2010) 515}  
{SEC(2010) 517}  
{SEC(2010) 518}  
{SEC(2010) 519}  
{SEC(2010) 520}  
{SEC(2010) 521}  
{SEC(2010) 522}  
{SEC(2010) 523}  
{SEC(2010) 524}  
{SEC(2010) 525}

## 1. Նախապատմությունն ու ընդհանուր գնահատումը

Հայաստանն ու ԵՄ առաջին անգամ պայմանագրային հարաբերություններ հաստատեցին 1996թ. Գործընկերության և համագործակցության համաձայնագրի միջոցով, որն ուժի մեջ մտավ 1999թ.: Սրա հիման վրա 2006թ. նոյեմբերին հաստատվեց ԵՄ-Հայաստան ԵՀՔ հնգամյա գործողությունների ծրագիրը:

ԵՄ-Հայաստան հանդիպումներ տեղի ունեցան Համագործակցության Խորհրդի, Համագործակցության Հանձնաժողովի և առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերի ենթահանձնաժողովների մակարդակով: 2008թ. Երևանում հիմնված ԵՄ պատվիրակության ուժեղացումը ավելի խթանեց ԵՄ-Հայաստան երկկողմանի հարաբերությունների ամրապնդումը: Մարդու իրավունքների ԵՄ-Հայաստան երկխոսության առաջին հանդիպումը տեղի ունեցավ 2009թ. դեկտեմբերին:

Այս փաստաթուղթը ներկայացնում է 2009թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31 ընկած ժամանակահատվածում ԵՄ-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացը, չնայած այս ժամանակահատվածից դուրս զարգացումները նույնպես հաշվի են առնվել՝ ըստ անհրաժեշտության: Սա Հայաստանի քաղաքական և տնտեսական իրավիճակի ընդհանուր ուսումնասիրությունն է: Ի լրումն, տարածաշրջանային և բազմակողմանի ոլորտային գործընթացների վերաբերյալ տեղեկությունների համար խնդրում ենք ծանոթանալ ոլորտային զեկույցի հետ:

ԵՄ և Հայաստանը համաձայնվել են ավելի խորացնել և լայնացնել ԵՄ-Հայաստան հարաբերությունները: Արևելյան Գործընկերությանը զուգահեռ և դրա շրջանակներում ԵՄ սկսել է Հայաստանի հետ պայմանագրային հարաբերությունների արդիականացման նախապատրաստությունները: 2010թ. մայիսին ԵՄ կողմից ընդունվել է Ասոցացման համաձայնագրի համար բանակցությունների որոշումը: Ապագա Ասոցացման համաձայնագրի շրջանակներում, խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (DCFTA) վերաբերյալ բանակցությունները կսկսվեն, երբ բավարարվեն անհրաժեշտ պայմանները:

Հայաստանի Հանրապետությունում ԵՄ խորհրդատվական խումբը սկսեց իր աշխատանքները 2009թ. ապրիլին՝ նպատակ ունենալով աջակցել Հայաստանի իշխանություններին ԵՀՔ գործողությունների ծրագրի հիմնական ոլորտների իրականացման գործում, ինչպիսիք են ժողովրդավարական կառույցների և մարդու իրավունքների ուժեղացումը, կոռուպցիայի դեմ պայքարը, առևտուրն ու մաքսային համակարգը և ֆիսկալ քաղաքականությունը՝ ներառյալ պարտքի կառավարումը:

Ընդհանուր առմամբ Հայաստանն առաջընթաց է գրանցել ԵՀՔ գործողությունների ծրագրի մի քանի ոլորտներում: ԵՄ հետ մարդու իրավունքների վերաբերյալ պարբերական երկխոսության սկսումը ԵՄ հետ քաղաքական երկխոսության ոլորտում լավ առաջընթաց է կազմում: Դրական քայլեր են արվել՝ անդրադառնալու 2008թ. փետրվարի նախագահական ընտրություններին հաջորդած ներքին քաղաքական ճգնաժամին, ներառյալ հունիսին հայտարարված համաձայնությունը, Քրեական Օրենսգրքի փոփոխությունները և խորհրդարանական *ժամանակավոր հանձնաժողովի* զեկույցի հրապարակումը: Լավ առաջընթաց է գրանցվել կոռուպցիայի դեմ պայքարի և Մարդու իրավունքների պաշտպանի դերի ուժեղացման ոլորտում իրավական դաշտի բարելավման ուղղությամբ:

Գլոբալ տնտեսական ճգնաժամը խորը ազդեցություն է թողել Հայաստանի վրա և հանգեցրել է զգալի տնտեսական անկման: Ընդհանուր առմամբ իշխանությունները արագ են արձագանքել՝ ձեռնարկելով միջոցներ մեղմացնելու ճգնաժամի ազդեցությունը: Սակայն պետական եկամուտների նվազեցումը որոշակի սահմանափակումներ են դրել ընդհանուր ներքին տնտեսական և սոցիալական բարեփոխումների գործընթացի վրա Հայաստանում՝ ներառյալ ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացումը:

Առաջընթաց է գրանցվել մաքսային և հարկային ոլորտներում: Հայաստանը շարունակեց իրականացնել բարեփոխումներ ֆինանսական ծառայությունների և մրցակցային քաղաքականության ոլորտներում: Սահմանափակ առաջընթաց է նկատվել ԵՄ կողմից առաջարկված և փաստափակված խմբից հետո Հայաստանի իշխանությունների կողմից աջակցված հիմնական բարեփոխումներում՝ DCFTA բանակցությունների նախապատրաստման համատեքստում: Իր կողմից էական լրացուցիչ ջանքերի պարագայում Հայաստանը նախապատրաստված կլինի սկսել DCFTA բանակցությունները:

Հայաստանը մեծ քայլ է ձեռնարկել տարածաշրջանային համագործակցության և Թուրքիայի հետ երկխոսության ուղղությամբ, որի արդյունքում 2009թ. հոկտեմբերին երկկողմանի հարաբերությունների հաստատման և զարգացման երկու պատմական արձանագրություններ ստորագրվեցին: 2010թ. ապրիլին Հայաստանը կասեցրեց երկու արձանագրությունների վավերացումը: ԵՄ ուրախ էր տեսնել Հայաստանի շարունակական նվիրվածությունը շարունակելու Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացը, բայց մինևույն ժամանակ մտահոգություն արտահայտեց այս գործընթացում պահի կորստի կապակցությամբ: Ադրբեջանի հետ երկխոսության հետ կապված՝ ամենաբարձր մակարդակով էականորեն ուժեղացվել են Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությունները:

Հայաստանը մեծապես համապատասխանեցրել է իրեն CFSP հռչակագրերի հետ և ընդհանուր առմամբ շատ ակտիվ է CFSP հետ կապված հարցերի համագործակցության խնդրում:

Հայաստանի իշխանությունները և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն ակտիվորեն մասնակցել են Արևելյան Գործընկերության բազմակողմանի ծրագրին, հատկապես բաց երկխոսության և չորս թեմատիկ պլատֆորմների համար աշխատանքային ծրագրերին իրենց նպաստման միջոցով: Արևելյան գործընկերության երկկողմանի տարրերի հետ միասին սա նպաստել է ԵՄ-Հայաստան հարաբերությունների ուժեղացմանը և ԵՀՔ գործողությունների ծրագրի առաջնահերթությունների շարունակման ամրապնդմանը:

Գործողությունների ծրագրի պարտավորությունները կատարելու համար Հայաստանը պետք է լրացուցիչ ջանքեր ներդնի ապահովելու 2008թ. մարտի դեպքերի խորհրդարանական *ժամանակավոր* հանձնաժողովի գեկույցի առաջարկությունների մանրամասն կատարումը, բարելավի ընտրական չափորոշիչները և ուժեղացնի լրատվամիջոցների ազատությունը: Ի լրում, առանցքային կարևորություն կստանան հետագա բարեփոխումները արդարադատության և իրավունքի գերակայության ոլորտում, հատկապես դատական մարմնի անկախությունը, դատախազության բարեփոխումները և բոլոր ոլորտներում ընդունված օրենսդրության պատշաճ կիրառումը: Իշխող

քաղաքական ուժերի և ընդհանուր միջև ուժեղացված երկխոսությունը կնպաստի երկրի ժողովրդավարական զարգացմանը:

## 2. Քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ

### *Ժողովրդավարություն և իրավունքի գերակայություն*

2009թ. մայիսին տեղի ունեցան Երևանի քաղաքապետի և ավագանու առաջին **ընտրությունները**: Եվրոպայի Խորհրդի (ԵԽ) Տեղական և շրջանային մարմինների կոնգրեսը եզրակացրեց, որ չնայած ընտրությունների կազմակերպչական մասը մեծապես համապատասխան էր եվրոպական ստանդարտներին, ընտրական վարքի բարելավումը և իրական ժողովրդավարական մշակույթը իշխանությունների կողմից մնացին առանց ուշադրության: Ընտրություններին նախորդող ժամանակահատվածի լրատվամիջոցների լուսաբանումը ընդհանուր առմամբ հավասարակշռված էր, բայց ընտրությունների ընթացքում տեղի ունեցան խախտումներ, ներառյալ ընտրություններին նախորդող բռնություն, քվեատուփերի լցումներ, բազմակի քվեարկումներ և ընտրողների ահաբեկում: Ընդհանուրը բոյկոտեց նորընտիր ավագանին:

Իշխանությունները մի շարք քայլեր ձեռնարկեցին անդրադառնալու 2008թ. նախագահական ընտրությունների և դրանց հաջորդած մարտի բռնի դեպքերի հետ կապված քաղաքական ճգնաժամին: 2009թ. հունիսին Ազգային ժողովն ընդունեց համաներում, որն ազդեցություն ունեցավ 2008թ. մարտի դեպքերի հետ կապված դեպքերի մեծ մասին: Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովը (PACE) ողջունեց համաներումը՝ դրա հետ մեկտեղ արտահայտելով մտահոգություն միայն ոստիկանության ցուցմունքների վրա հիմնված մեղադրանքների և դատապարտվածությունների հետ կապված, առանց էական հաստատող ապացույցների: Համաներումն ազատվեցին 2008թ. մարտի հետ կապված անձանց մեծ մասը, բայց այս դեպքերի հետ կապված մեղադրանքով ձեռքակալված անձանց մեծ մասը դեռ մնում ենք կալանքի տակ: 2009թ. մարտին փոփոխություններ կատարվեցին Քրեական Օրենսգրքում, որոնք կապված էին զանգվածային անկարգությունների և իշխանության զավթման հետ՝ ԵԽ Վեներտիկի Հանձնաժողովի առաջարկություններին համապատասխան:

2009թ. հունիսին, իր անդամների միջև էական լարվածությունների արդյունքում, որը ներառում էր ընդհանուրապես ու Մարդու իրավունքների պաշտպանին, Նախագահը որոշեց լուծարել 2008թ. մարտի դեպքերի փաստափակաբ խումբը՝ վերջինիս զեկույցի հրապարակումից հետո: 2009թ. սեպտեմբերին 2008թ. մարտի դեպքերն ուսումնասիրող խորհրդարանական *ժամանակավոր* հանձնաժողովը, բոյկոտված ընդհանուր կողմից, իր վերջնական զեկույցը ներկայացրեց Ազգային ժողովին: Չնայած, որ զեկույցը ԵԽԽՎ համազեկուցողների կողմից համարվեց, որպես դեպքերի միակողմանի ներկայացում, այն առաջարկությունների մի համապարփակ խումբ էր ներկայացնում, ներառյալ կոչ անելով իշխանություններին ջանքեր ներդնել բացահայտելու և քրեորեն հետապնդելու մահվան դեպքերի համար պատասխանատու անձանց: Իշխանությունները պետք է ավելի շատ ջանքեր ներդնեն՝ հետևելու զեկույցի առաջարկությունների իրականացմանը:

2008թ. մարտի դեպքերի հետ կապված դատավարությունների մոնիտորինգը տարբեր բացթողումներ բացահայտեց՝ կապված արդար դատավարության և ազատության իրավունքի հետ՝ ներառյալ նախաքննչական կալանքի

գերօգտագործումը, դատավորների անաչառության և անկախության բացակայությունը, ոստիկանության մեղադրական ցուցմունքների օգտագործումը և անօրինական կերպով ձեռք բերված ապացույցներն ու մեղադրյալի բացակայությամբ մի շարք դատավարությունների անցկացումը: 2008թ. մարտի դեպքերի մեջ ներգրավված չորս ոստիկաններ 2009թ. դեկտեմբերին դատապարտվեցին: 10 մահվան դեպքերի հետաքննության արդյունքում դեռ ոչ մեկին պաշտոնական մեղադրանք չի ներկայացվել:

**Դատական** համակարգի բարեփոխումները, ներառյալ Դատական Օրենսգրքի, Դատախազության Մասին Օրենքի և Արդարադատության Ակադեմիայի Մասին Օրենքի փոփոխությունների շարունակվեցին 2009թ.: 2009-11թթ. դատաիրավական բարեփոխումների իրականացման ռազմավարական գործողությունների ծրագիրն ընդունվեց 2009թ. ապրիլին: 2009թ. լավ առաջընթաց գրանցվեց էականորեն ավելացնելով դատավորների աշխատավարձերը: Սակայն դատաիրավական համակարգի անկախությունը դեռ մտահոգության առարկա է մնում և այն ուժեղացնելու համար լրացուցիչ ջանքեր են պետք ներդնել: Ընդհանուր առմամբ ավելի շատ ջանքեր են պահանջվում ապահովելու բոլոր ոլորտներում օրենսդրության պատշաճ կիրառումը: Սեփականության իրավունքի ներքին պաշտպանությունը մտահոգության առարկա է մնում, որոնք ներկայումս կազմում են Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանում Հայաստանի դեմ ներկայացված գործերի մեծ մասը՝ կապված գույքի իրավունքի հետ կապված խախտումների հետ: ԵՄ էական աջակցություն է տրամադրում արդարադատության բարեփոխումների ոլորտում՝ Արդարադատության Բարեփոխումների ոլորտային բյուջետային աջակցության ծրագրի (18 միլիոն եվրո) և Եվրոպայի Խորհրդի հետ միասին Արդարադատության Մատչելիության ուժեղացման միացյալ ծրագրի միջոցով (4 միլիոն եվրո):

Կարևոր քայլեր են ձեռարկվել բարելավելու օրենսդրական դաշտը **կոռուպցիայի դեմ պայքարի** ոլորտում: 2009թ. հոկտեմբերին ընդունվեց 2009-2012թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունն ու դրա գործողությունները ծրագիրը, որը ներառում է մոնիտորինգի և գնահատման համակարգի հիմնումը: Ռազմավարությունը նախատեսում է մի հակակոռուպցիոն քարտուղարություն՝ օժանդակելու գործողությունների ծրագրի իրականացումն ու մոնիտորինգը: Նախագծման գործընթացը ներառում էր քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և համապատասխան միջազգային կազմակերպություններին: 2009թ. սեպտեմբերին Հայաստանը դարձավ Լավ պետական կառավարման և կոռուպցիայի դեմ պայքարի ՏՀԶԿ Աստանայի հռչակագրի ստորագրող կողմ: Վարչապետի աշխատակազմը մշակեց քաղաքական գործունեության թափանցիկության վերաբերյալ մի հայեցակարգային փաստաթուղթ՝ կանոնակարգելով բարձրաստիճան պաշտոնյաների և իրենց մերձավոր ազգականների շահերի բախումն ու ստեղծելով նրանց եկամտի, գույքի և շահերի հայտարարագրման պետական ռեգիստր: Ջանքեր են ներդրվել՝ կապված հակակոռուպցիոն հարցերում քաղաքացիական ծառայողների վերապատրաստմանը: Սակայն, չնայած լավ օրենսդրական առաջընթացը, միջազգային հետազոտությունները 2009թ. կոռուպցիայի ընկալման ոչ մի նվազեցում չեն գրանցել, որը ցույց է տալիս այս ոլորտում արդյունավետ կրառման անհրաժեշտությունը:

Քայլեր են ձեռնարկվել ուժեղացնելու տեղական ժողովրդավարությունը: Ինչպես արդեն ներկայացվեց, 2009թ. մայիսին համամասնական ընտրակարգով առաջին անգամ ընտրվեցին Երևանի քաղաքապետն ու ավագանին՝ փոխարինելով նրանց

նախագահի կողմից նշանակվելու նախկին համակարգը: 2009թ. մայիսին ստեղծվեց մի միջգերատեսչական հանձնաժողով՝ մշակելու միջհամայնքային միավորումների ստեղծման և համայնքների ընդլայնման գործողությունների ծրագիրը՝ ուժեղացնելու տեղական ինքնակառավարումը և զարգացնելու ցանցերը համայնքների միջև՝ նպատակ ունենալով ռացիոնալիզացնել ծառայությունների մատուցումը: 2009թ. հոկտեմբերին Նախագահի աշխատակազմի ներքո ստեղծվեց **Քաղաքացիական Ծառայության Բարեփոխումների** աշխատանքային խումբը՝ նպատակ ունենալով մշակել քաղաքացիական ծառայության բարեփոխումների ծրագիրը:

### *Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ*

2009թ. դեկտեմբերից սկսվեց ԵՄ-Հայաստան **Մարդու իրավունքների** պարբերական երկխոսությունը: Աշխատանքներ են ընթանում նախագծելու առաջին Հայկական ազգային մարդու իրավունքների գործողությունների ծրագիրը, 2009թ. աշնանը հիմնադրված աշխատանքային խմբում՝ նախապատրաստելու հայեցակարգային փաստաթուղթն ու սահմանելու դրա շրջանակը: Սակայն քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը դեռ չի սկսվել:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության (HRDO) անկախությունը քաղաքական համակարգում և դրա դերը մարդու իրավունքների պաշտպանության մեջ ավելի է ամրապնդվել: Ընդհանուր առմամբ HRDO կողմից ստացված բողոքների թիվն աճի միտում ունի՝ հաստատելով այս հաստատության աճող վստահելիությունը: Մարդու իրավունքների պաշտպանը նախապատրաստեց 2008թ. մարտի դեպքերի հետ հետ կապված քրեական հետապնդումների և 2009թ. դեկտեմբերին Հայաստանի դատական համակարգում արդար դատավարության չափորոշիչների իրականացման գնահատման մի նախնական զեկույց: Բացի տարեկան զեկույցից, 2009թ. HRDO հրապարակեց նաև հաշվետվություններ ազգային դատարանների կողմից ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոնվենցիայի, սոցիալական իրավունքների և զինված ուժերում կարգապահական պատժամիջոցների կիրառման մասին: 2009թ. հոկտեմբերին սկսվեց մի համանման ծրագիր՝ նպատակ ունենալով աջակցել HRDO տեխնիկական և կազմակերպչական կարողությանը:

2009թ. Հայաստանը մի շարք հաշվետվություններ ներկայացրեց ՄԱԿ պայմանագրային մարմիններին, ներառյալ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային համաձայնագրի, Ռասսայական խտրականության բոլոր ձևերի վերացման, Տանջանքի և այլ դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի իրականացումը: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի և Երեխայի իրավունքների կոնվենցիայի իրականացման մասին հաշվետվությունները նախապատրաստվել են և ակնկալվում է, որ դրանք կներկայացվեն ՄԱԿ-ին 2010թ.: Երկիրն ուշանում է ներկայացնելու ընդհանուր առմամբ հինգ պարտադիր պարբերական հաշվետվությունները ՄԱԿ պայմանագրային մարմիններին: 2009թ. մայիսին Հայաստանը իր երրորդ հաշվետվությունը ներկայացրեց Եվրոպական սոցիալական խարտիայի իրականացման վերաբերյալ: Հանձնաժողովի եզրակացությունները հրապարակվեցին 2010թ. հունվարին: ԵՄ ազգային փոքրամասնությունների վերաբերյալ շրջանակային կոնվենցիայի իրականացման երրորդ պարբերական հաշվետվությունը ներկայացվեց 2009թ. նոյեմբերին: Հայաստանը ստացել է ՄԱԿ հատուկ ընթացակարգերի մշտական հրավերը:

Կալանավայրերում և ոստիկանության կողմից **խոշտանգումների և վատ վերաբերմունքի** մասին դեպքերը շարունակվեցին ներկայացվել 2009թ.՝ ներառյալ 2008թ. մարտի դեպքերի հետ կապված կալանավորվածների և գորակոչիկների շրջանում, բանտերում և ոստիկանություններում: Տանջանքների և վատ վերաբերմունքի մասին ոչ մի տվյալ գոյություն չունի ու վատ վերաբերմունքի մասին մեղադրանքների հետաքննության պակասը մտահոգության առարկա է: Հայաստանը շարունակեց քայլեր ձեռնարկել Տանջանքի դեմ կոնվենցիայի կանոնադրանքային արձանագրության (OPCAT) իրականացման ուղղությամբ և 2009թ. դեկտեմբերին ներկայացրեց OPCAT իրականացման առաջին հաշվետվությունը: Պետք է ապահովվի OPCAT կանխարգելման ազգային մեխանիզմում քաղաքացիական հասարակության ներգրավվածության իրավական հիմքը: Անհրաժեշտ է լրացուցիչ փոփոխություններ կատարել «Այլընտանքային զինծառայության մասին օրենքում»՝ ամբողջովին համապատասխանելու Եվրոպայի Խորհրդի չափորոշիչների հետ և ապահովելու իրական քաղաքացիական ծառայություն:

**Ձանքեր են ներդրվել բարելավելու բանտային պայմանները:** 2009թ. դեկտեմբերին ընդունվեց քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքների բարեփոխումների հայեցակարգը, ինչպես նաև նոր քրեակատարողական հաստատության պլանը: Սակայն կալանավայրերի ընդհանուր պայմանները և նախաքննչական կալանգի գերօգտագործումը, ինչպես նաև գնալով աճող բանտարկյալների թիվը մտահոգության առարկա է մնում: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներն ունեն կալանավայրերի, բայց ոչ ոստիկանատների մուտքի երաշխավորված հնարավորություն:

**Խոսքի և լրատվամիջոցների ազատության** ոլորտում փոփոխվել է օրենսդրությունը: 2009թ. ապրիլին չորս օրենքներ ընդունվեցին՝ փոխելու Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ու Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի կարգավիճակները՝ ներառելով Եվրոպայի Խորհրդի առաջարկությունների մեծ մասը: Սակայն հեռարձակման կարգավորիչ մարմինների կազմն ու անդամների նշանակման միջոցները դրանց լիարժեք անկախության հետ կապված հարցեր են առաջացնում: Հեռուստատեսային և ռադիո հեռարձակման թվայնացման հիման վրա մինչև 2010թ. հուլիսը ռադիո և հեռուստատեսային լիցենզիաների տրամադրման 2008թ. մորատորիայից հետո՝ 2009թ. նոյեմբերին կառավարությունը հրապարակեց թվային հեռարձակման անցման հայեցակարգի նախագիծը՝ կենտրոնանալով թվայնացման գործընթացի տեխնոլոգիական և տնտեսական ոլորտների վրա:

2009թ. նվազել են լրագրողների դեմ բռնության և նրանց ահաբեկման զեկուցված դեպքերի քանակը, բայց դրանց հետաքննության արդյունքում ոչ մեկին մեղադրանք չի ներկայացվել:

2009թ. ցույցեր կազմակերպելու ընդհանրության կողմից ներկայացված մի քանի դիմումները մերժվել են իշխանությունների կողմից: «Ցույցերի և երթերի մասին օրենքը» մեծապես համապատասխանում է Եվրոպայի Խորհրդի չափորոշիչներին, բայց հավաքների անցկացման արգելման հիմքերին վերաբերող որոշ դրույթներ լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն: Սակայն ցույցերի ժամանակ մասնակիցների ցրման մեջ ոստիկանության միջամտության և ընդհանրության ցույցերի հետ համընկնող մարզերից Երևան եկող հանրային տրանսպորտի մասնակի բացակայության դեպքեր են մի քանի անգամ զեկուցվել 2009թ.:

2009թ. մարտին հիմնվեց **քաղաքացիական հասարակության** հետ խորհրդակցելու համար հանրային խորհուրդը՝ նպատակ ունենալով ֆորում ապահովել հանրային հետաքրքրությունն ներկայացնող հարցերի վերաբերյալ հանրային քննարկումների համար: Հանրային խորհրդի անկախությունը շարունակում է կասկածի տակ առնվել ընդհանրության և մի շարք ՀԿ-ների կողմից: Ընդհանուր առմամբ կառավարության կողմից ՀԿ-ների հետ խորհրդակցությունները օրենքների նախագծերի վերաբերյալ և նրանց մասնակցությունը խորհրդարանական լսումներին ավելացել են, բայց դեռ տեղի են ունենում դեպքից դեպք: Սակայն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ չեն խորհրդակցել «Հասարակական կազմակերպությունների մասին օրենքի» նոր փոփոխությունների վերաբերյալ, որը նախապատրաստվել է կառավարության կողմից: Հաշվի առնելով ՀԿ-ների կողմից քննադատությունը, կապված ՀԿ-ների աշխատանքների տարեկան հաշվետվությունների նախատեսված պարտադիր հրապարակման հետ՝ փոփոխությունները ժամանակավորապես կասեցվեցին խորհրդարանում:

«Կանանց կարգավիճակի հզորացման և հասարակության մեջ կանանց իրավունքների ուժեղացման» 2004-2010թթ. ազգային գործողությունների ծրագրի իրականացումը հաշվետու ժամանակահատվածում շարունակվեց: Սակայն «Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին օրենքը» դեռ չի ընդունվել և ընտանեկան բռնությունը քրեականացնող օրենքի նախագիծը դեռ քննարկման փուլում է: Անհրաժեշտ է մի պատշաճ գեներային հավասարության օրենսդրություն, որն արդյունավետ կերպով կանդրադառնա ընտանեկան բռնության հարցերին և կբարելավի կանանց մասնակցությունը քաղաքական և տնտեսական կյանքում:

2009թ. սեպտեմբերին Հայաստանը ստորագրեց Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային համաձայնագրի այլընտրանքային արձանագրությունը: Լրացուցիչ ջանքեր են պահանջվում ապահովելու արհմիությունների և կոլեկտիվ սակարկությունների իրավունքները: Շարունակվում են **աշխատանքային իրավունքների** օրենսդրության նախագծումը: 2009թ. դեկտեմբերին խորհրդարան է ուղարկվել Աշխատանքային Օրենսգրքի փոփոխությունների մասին օրենքի նախագիծը՝ կառավարության հավանությունից հետո:

***Արտաքին և անվտանգության համագործակցություն, հակամարտությունների կանխարգելու և ճգնաժամերի կառավարում***

Հայաստանը շարունակեց անդամակցել CFSP հռչակագրերի հետ դեպքից դեպք հիման վրա: 2009թ. Հայաստանը անդամակցել է CFSP 138 հռչակագրերից 108-ին: 2009թ. Հայաստանի կառավարության հետ եղել է լավ քաղաքական երկխոսություն, ներառյալ երկու քաղաքական և անվտանգության Տոնյկա հանդիպումների միջով 2009թ. փետրվարին և դեկտեմբերին և 2009թ. հուլիսին ԵՄ արտաքին նախարարների Տոնյկայի այցելությունը հայաստան:

Հայաստանը շարունակեց համագործակցությունը ՄԱԿ-ի հետ, մասնակցեց ՆԱՏՕ գործընկերություն հանուն խաղաղության ծրագրին և համագործակցեց Միացյալ Ազգերի թմրամիջոցների և հանցագործության գրասենյակի (UNODC), ԻՆՏԵՐՊՈԼի, Համաշխարհային մաքսային կազմակերպության, ԱՊՀ և ԵԽ փորձագետների հետ՝ ահաբերկչության հետ կապված հարցերում տեղեկատվություն փոխանակելու ուղղությամբ: Հայաստանը հաջողությամբ



համագործակցեց Միացյալ Ազգերի հակաահաբեկչական հանձնաժողովի (CTC) հետ՝ հիմնադրված UNSC 1373 բանաձևով:

**Միջազգային քրեական դատարանի** Հռոմի կանոնադրության ստորագրման և վավերացման ոչ մի առաջընթացի չի գրանցվել:

### ***Տարածաշրջանային համագործակցության ուժեղացում***

2009թ. հոկտեմբերին Հայաստանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարները ստորագրեցին երկու արձանագրություններ դիվանագիտական հարաբերությունների հիմնման և երկկողմանի հարաբերությունների զարգացման վերաբերյալ, ներառյալ ընդհանուր սահմանի բացման հեռանկարները, որը երկու երկրների միջև հարաբերությունների նորմալացման ուղղությամբ մի մեծ քայլ էր: Արձանագրությունները Ազգային ժողովի վավերացման ներկայացվեցին 2010թ. փետրվարին: 2010թ. ապրիլին Հայաստանը կասեցրեց երկու արձանագրությունների վավերացման գործընթացը, բայց հաստատեց Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացման գործընթացի իր նվիրվածությունը:

Հարավային Կովկասի սահմանների ինտեգրված կառավարումը (SCIBM), աջակցված ԵՄ կողմից Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի միջև, պետք է սկսվել 2009թ. հունվարին, բայց ուշացավ, որպեսզի անդրադառնա Ադրբեջանի կողմից բարձրացված հարցերին անդրադառնալու համար: Իրականացման պայմանները ներկայումս ընդունված են բոլոր երեք երկրների կողմից և իրականացումը սկսվեց 2010թ. մարտին (*տես գլուխ 5 արդարադատության, ազատության և անվտանգության համագործակցության վերաբերյալ*):

Հարավային Կովկասում թմրանյութերի դեմ պայքարի ծրագիրն (SCAD V) ավարտվեց 2009թ.: Քննարկումներ են ընթանում, թե ինչպես լավագույնս հասնել գործողությունների արդյունքի և շարունակել տարածաշրջանային ջանքերը անօրինական թմրանյութերի դեմ պայքարում:

Կովկասում տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (REC) նոր ղեկավարությունը (հայ, ադրբեջանցի և վրացի գործադիր տնօրեններից կազմված մի եռյակ) պաշտոնավարման անցավ 2009թ. հունվարին: Այն կոնսուլիդացրեց REC և ֆինանսապես և ներքին կազմակերպության առումով: REC տարածաշրջանային աշխատանքներ իրականացրեց 2009թ., հատկապես տեղեկատվության և հանրային մասնակցության, բնապահպանական քաղաքականության և տեղական բնապահպանական գործողությունների ծրագրերի, լեռնային շրջանների պաշտպանության և կայուն զարգացման ոլորտներում: Այն տարածաշրջանային համագործակցության և Հարավային Կովկասի ապագայի կայունության խթանման մի կարևոր գործիք է:

Բարձրագույն կրթության ոլորտում Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի համալսարանները համագործակցել են հեռական ուսուցման և էլեկտրոնային ուսուցման ծրագրերում: Սա առաջին անգամն է, որ այսպիսի տարածաշրջանային համագործակցություն է ի հայտ եկել Tempus ծրագրի շրջանակներում:

### ***Աջակցություն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը***

2009թ. նկատելիորեն ակտիվացան խաղաղ կարգավորման Մինսկի խմբի բանակցությունները և նպաստեցին ուժեղացված երկխոսությանը՝ Հայաստանի և

Աղրբեջանի նախագահների հետ ունենալով վեց երկկողմանի հանդիպումներ տարվա ընթացքում: Ի լրումն, երկու երկրների արտաքին գործերի նախարարները մի քանի անգամ հանդիպեցին, ներառյալ 2009թ. դեկտեմբերին Աթենքում ԵԱՀԿ նախարարական խորհրդի ժամանակ: Հակամարտության լուծում գտնելու համար երկու կողմերից էլ կպահանջվեն համարձակ քայլեր:

2009թ. Հունիսին Լակվիլայում նախագահական մակարդակով մեծ ութնյակի զագաթնաժողովի ժամանակ ԵԱՀԿ Մինսկի խմբի միացյալ հայտարարությունը կոչ արեց «Հայաստանի և Աղրբեջանի նախագահներին լուծել իրենց մեջ մնացած մի քանի տարբերությունները և վերջնականացնել իրենց համաձայնությունը այս հիմնական սկզբունքների շուրջ, որը մի համապարփակ լուծում կսահմանի»: Սակայն ընդհանուր լարվածությունը դեռ մնում է և իրավիճակը շարունակում է փխրումն մնալ: Կրակոցների փոխանակման և մահացու դեպքերը շփման գծում շարունակում են տեղի ունենալ և մտահոգության առարկա են:

### 3. Տնտեսական և սոցիալական բարեփոխումներ

#### *Մակրոտնտեսական դաշտն ու գործող շուկայական տնտեսություն*

Գլոբալ տնտեսական ճգնաժամը և հատկապես Ռուսաստանի տնտեսության արագ քայքայումը 2009թ. խորը ազդեցություն ունեցավ Հայաստանի տնտեսության վրա: Տնտեսական ակտիվությունը, որը սկսեց նվազել 2008թ. վերջի եռամսյակում, բազմապատկվեց մոտ 15.4%-ով 2009թ.՝ ներկայացնելով մի զանգվածային շրջանառություն, համեմատած նախորդ տարիների ուժեղ աճի հետ: Սա հանդիսացավ մոտ 38% շինարարության ոլորտի անկման արդյունք, որպես դրամական փոխանցումների մոտ 28% նվազեցման անմիջական հետևանք և արդյունաբերական արտադրության մոտ 10% լուրջ կրճատում:

Իշխանություններն արագ արձագանքեցին և միջոցառումներ ձեռնարկեցին մեղմացնելու արտադրանքի կտրուկ նվազեցման ազդեցությունները: 2009թ. մարտին նրանք վերադարձան մի ամբողջովին լողացող փոխանակման կուրսի ռեժիմի՝ դե ֆակտո թույլ տալով հայկական դրամի մոտ 22% արժեզրկում եվրոյի և ԱՄՆ դոլարի համեմատությամբ: Այս քայլն օգնեց բարելավել մրցունակությունն առանց վտանգելու ֆինանսական կայունությունը, քանի որ արժեզրկման բացասական հետևանքները մեծապես մեղմացվել էին: Միևնույն ժամանակ նրանք համաձայնություն ձեռք բերեցին ԱՄՅ հետ 790 միլիոն ԱՄՆ դոլարի (553 միլիոն եվրոյի) միշտ պատրաստ համաձայնագրի վերաբերյալ՝ դրա հետ մեկտեղ լրացուցիչ ֆինանսավորում ապահովելով այլ բազմակողմանի և երկկողմանի դոնորներից (ներառյալ 500 միլիոն ԱՄՆ դոլար – 350 միլիոն եվրո – կայունացման վարկ Ռուսաստանի Դաշնությունից)՝ բավարարելու գնալով աճող ֆինանսական կարիքները:

Ֆիսկալ քաղաքականությունը տնտեսությանն օժանդակող էր, ծախսային պլանները կենտրոնանալով ծավալուն հակակոռուպցիոն միջոցառումների, ավելացող օտարերկրյա ֆինանսավորվող կապիտալ ծախսերի և սոցիալական ծախսերի պաշտպանության վրա: Մասնակիորեն շնորհիվ արտաքին փոխառությունների, իշխանությունները մոտ 15% հարկային եկամուտների նվազեցմանը կարողացան հարմարվել առանց էականորեն կրճատելով ծախսերը՝ դրա հետ մեկտեղ հաշվի առնելով ֆինանսական սահմանափակումները և պարտքի կայունության մտահոգությունները: Որպես արդյունք ակնկալվում է, որ ֆիսկալ դեֆիցիտը կավելանա մինչև ՀՆԱ 7.5% և պետական պարտքը կկազմի ՀՆԱ

37% 2009թ.: Միևնույն ժամանակ ֆիսկալ կառուցվածքային բարեփոխումների օրակարգն առաջ է ընթացել ԱԱՀ փոխհատուցման գործընթացի բարելավումների և խոշոր հարկատուների հարկային եկամուտների էլեկտրոնային հայտարարագրման ներդրման միջոցով:

Դրամավարկային քաղաքականությունը մեղմացավ և Հայաստանի Կենտրոնական Բանկը (ՀԿԲ) նվազեցրեց իր քաղաքականության տոկոսադրույքը ապրիլ 7.75%-ից սեպտեմբերի 5% 2009թ.՝ նպաստելու տնտեսության վերականգնմանը: Այն դրամային լիկվիդայնություն ներարկեց նաև տարբեր կապուղիների միջոցով, ներառյալ պետական պարտատոմսերի գնումները և իր ռեպո օպերացիաների հասունության ավելացումը: Սակայն, փոխանցման մեխանիզմի թուլության պատճառով բանկային վարկավորման տոկոսադրույքները մնացին 18% վրա՝ պատճառ հանդիսանալով իշխանությունների կողմից լրացուցիչ գործողությունների համար, ինչպիսիք են դոնորների/վարկատուների կողմից տրամադրված վարկային ռեսուրսների վերավարկավորումը թիրախային ՓՄՁ-ներին և խոցելի արդյունաբերություններին՝ Կոնտրոնական Բանկի և առևտրային բանկերի միջոցով: Փոխանցման մեխանիզմի թուլությունը դուրսով ավանդների բարձր մակարդակն է, որը մնում է մոտ 70%:

Միջին սղաճը կազմում է մոտ 3.4%, թույլ պահանջարկի ֆոնի վրա, ի հեճուկս 2009թ. մարտին դրամի արժեզրկման: Սակայն սղաճն ավելացավ մինչև 6.5% 2009թ. դեկտեմբերին, միջազգային գների աճի, ընթացիկ էքսպանսիոն քաղաքականությունների, ներքին գների կարծրության և գերլիկվիդայնությունից առաջացող սպեկուլյատիվ փոխանակման կուրսի ճնշումների պատճառով: 2009թ. վերջին ՀԿԲ ազդարարեց մեղմացող ցիկլի վերջը և իր պատրաստակամությունը գործելու սղաճի թիրախավորման դաշտի շրջանակներում, եթե սղաճային ճնշումներ առաջանան: Սակայն ակնկալվում է, որ սղաճը կնվազի 2010թ.:

Արտաքին պարտքի շրջանառությունը նվազեց մոտ 28% 2009թ.: Արտաքին եկամուտները նվազեցին մոտ 37%, ազդված մետալուրգիական ապրանքների գների անկմամբ, մինչդեռ ներմուծումները նվազեցին ավելի քիչ՝ մոտ 26%: Արդյունքում, գնահատվում է, որ ընթացիկ հաշվի դեֆիցիտը ընդլայնվել է 2009թ. ՀՆԱ-ի մինչև 13.7%: ՕՈՒՆ փլուզման հետ միասին սա լուրջ մտահոգություններ է առաջացնում Հայաստանի տնտեսության մրցունակության մասին:

***Ջրադվածություն և սոցիալական քաղաքականություն***

Տնտեսական ճգնաժամի արդյունքում, որը լուրջ ազդեցություն թողեց Հայաստանի վրա, կառավարությունը որոշեց ժամանակավորապես կասեցնել **աղքատության նվազեցման** Կայուն զարգացման ծրագիրը:

**Գործազրկության** պաշտոնական մակարդակը 2009թ. վերջի դրությամբ գնահատվում էր 7.1%: Երիտասարդները և կանայք շարունակում են ամենաշատն ազդվել՝ կազմելով պաշտոնական գործազրկության համապատասխանաբար 20.7% և 70.7%: Պետական զբաղվածության ծառայությունները հաշվետու ժամանակահատվածում շարունակեցին վերապատրաստման աշխատանքները:

**Սոցիալական երկխոսության** առումով 2009թ. մայիսին ստորագրվեցին կոլեկտիվ համաձայնագրեր սոցիալական գործընկերների հետ: Նույն ամսում ստեղծվեց նաև մի եռակողմ հանձնաժողով՝ կառավարության, արհմիությունների և գործատուների ներկայացուցիչների մասնակցությամբ: 2007-2011թթ.

արժանապատիվ աշխատանքի հանրապետական ծրագրի իրականացումը շարունակվեց հաշվետու ժամանակահատվածում:

**Սոցիալական ներառման և պաշտպանության** առումով նոր կենսաթոշակային համակարգի ներդրումը հետաձգվեց մինչև 2011թ.:

**Գյուղատնտեսական** կայուն զարգացման իրականացումը ներկայումս ընթացքի մեջ է և գյուղական ենթակառուցվածքների արդիականացումը շարունակվում է միջազգային կազմակերպությունների և Հայաստանի կառավարության ուժեղ աջակցությամբ:

2009թ. հունվարին **Կայուն զարգացման** ազգային խորհուրդը (NCSD) երկրորդ անգամ ժողով գումարեց՝ համաձայն «Կայուն զարգացման ծրագիր 2008-2021թթ.»: Լրացուցիչ գործողություններ ձեռնարկվեցին՝ իրականացնելու 2009-2012թթ. կայուն զարգացման ծրագիրը, հատկապես ջրային ոլորտում:

#### **4. Առևտրի հետ կապված հարցեր, շուկա և կարգավորիչ դաշտ**

**Երկկողմանի առևտրի** հետ կապված՝ 2009թ. ֆինանսական ճգնաժամի պատճառով տնտեսական ակտիվության գլոբալ անկման արդյունքում ԵՄ արտահանումները Հայաստան նվազեցին 20.6%՝ համեմատած նախորդ տարվա հետ, մինչդեռ հայկական ապրանքների արտահանումները ԵՄ նվազեցին 49.3%: Ապրանքների կառուցվածքի առումով Հայաստանի արտահանումները ԵՄ դեռ ոչ դիվերսիֆիկացված են մնում և ցածր ավելացված արժեքով՝ 2009թ. դրանց մոտ երկու երրորդը (64.3%) կազմված էր բազային մետաղներից և մոտ մեկ հինգերորդը (18.8%) մարգարիտից և թանկարժեք քարերից:

Հայաստանը 2009-2011թթ. օգտվում է ԵՄ «Generalized System of Preferences Plus (GSP+)» համակարգից՝ նպատակ ունենալով ավելի դիվերսիֆիկացնել իր արտահանման կառուցվածքը և բարելավել արտահանման կատարողականը: Հայաստանի արտահանողները նույնպես ուսուցանվել են հաշվետու ժամանակահատվածում՝ օգտագործելու ԵՄ Արտահանման Համակարգը, որը թույլ է տալիս նրանց ամբողջովին օգտվել GSP+ նախապատվություններից: 2009թ. ապրիլից ԵՄ խորհրդատվական խումբն օժանդակեց կառավարությանը մի շարք առևտրի հետ կապված ոլորտներում, հատկապես GSP+ միջոցառումները հնարավորինս լավագույն ձևով օգտագործելու և ապագա ԵՄ-Հայաստան Խորը և Համապարփակ Ազատ Առևտրի Գոտու (DCFTA) նախապատրաստման ջանքերը:

Եվրոպական հանձնաժողովը մի փաստահավաք առաքելություն իրականացրեց Հայաստանում 2009թ. փետրվարին և մի մանրամասն գնահատում կատարեց DCFTA-ին Հայաստանի պատրաստվածության առումով: Այն առաջարկություններ ներկայացրեց այն հիմնական բարեփոխումների առումով, որոնք Հայաստանը պետք է իրականացնի DCFTA բանակցային գործընթացին պատրաստ լինելու համար («առանցքային առաջարկություններ»): Այս գնահատումը աջակցվել է Հայաստանի իշխանությունների կողմից 2009թ. հունիսին: 2009թ. նոյեմբերին Հայաստանը մի ինստիտուցիոնալ կառուցվածք ստեղծեց նախապատրաստական և ապագա բանակցային գործընթացի համար, որը դեռ պետք է գործնառական դառնա: Ինչ վերաբերում է այլ այլ առաջարկություններին, ապա սահմանափակ առաջընթաց է գրանցվել: Իր կողմից եական լրացուցիչ ջանքերով և որպեսզի կարողանա հիմնական կարգավորիչ ոլորտներում անհրաժեշտ առաջընթացի

հասնել, ներառյալ վարչական կարողությունների ուժեղացումը, Հայաստանը պատրաստ կլինի DCFTA բանակցություններ համար:

Լավ առաջընթաց է գրանցվել **մաքսային** ոլորտում: «2008-2012թթ. համապարփակ մաքսային վարչարարության ռազմավարությունը» լրանշակվեց՝ 2009թ. դեկտեմբերին ռազմավարական գործողությունների ծրագրի մշակման և ներդրման միջոցով, որը մանրամասնում է, յուրաքանչյուր ռազմավարական նպատակի համար, ձեռնարկվելիք գործողությունները, հաջողության չափանիշը, կատարողականի ցուցանիշները և թիրախային ժամկետները: 2008թ. էփիկայի կողմից ներդրումից հետո մաքսային վարչարարությունը նախաձեռնեց ներքի կոռուպցիոն ռիսկերի գնահատում՝ նպատակ ունենալով կոռուպցիոն ռիսկերի դեմ պայքարի մի գործողությունների ծրագիր ստեղծել: Մաքսային բրոքերների մի ցանց ստեղծվեց և 125 բրոքերներ վերապատրաստում անցան: Մաքսայինի ղեկավարությունը մի քանի ձեռնարկներ նախապատրաստեց այնպիսի թեմաների վերաբերյալ, ինչպիսիք են մաքսագերծումները, ուղևորների ստուգումները, մաքսային վճարները և մաքսագերծումից հետո ստուգումները ու բաժանեց դրանք բոլոր մաքսակետերին: Հաշվետու ժամանակահատվածում մաքսային ղեկավարությունն աշխատեց «ռիսկերի կառավարման որոշման» մշակման վրա՝ սահմանելով մաքսային աշխատակիցների աշխատանքները կենտրոնական գրասենյակում, մաքսատներում և այլ մաքսակետերում, ինչպես նաև սահմանի վրա: Որոշումը կներառի ոչ միայն մաքսագերծման և զննման համակարգերը, այլ նաև պահեստավորումը, այլ մաքսային ռեժիմները և հետ մաքսագերծման ստուգումները: Այն կապ կհաստատի հետաքննչական գործառույթի հետ և կներառի ռիսկի պրոֆիլները բոլոր ոլորտներում: Հետագա բարելավումներ են պահանջվում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ռիսկի կառավարումը, ազնվությունը, այլ իրավապահների հետ համագործակցությունը, հիմնական միջազգային մաքսային գործիքների հասանելիությունը, վարչական վճարների վերացումը, նախապատվային ծագման սերտիֆիկատների ստուգումը, մաքսային գնահատման պրակտիկան, ինչպես նաև ՄՄԻ պաշտպանության գործում մաքսային դերը:

**Ապրանքների ազատ տեղաշարժման և տեխնիկական կանոնակարգերի** հարցում որոշ առաջընթաց է գրանցվել: Առևտրի տեխնիկական արգելքների վրա ազդող գործող օրենքների փոփոխությունների և մի շարք նոր օրենքների նախագծեր են նախապատրաստվել և քննարկվել 2009թ. ընթացքում՝ ներառյալ ստանդարտացման, համապատասխանության գնահատման, չափագրման և հավատարմագրման մասին օրենքները (փոփոխելով 2004թ. հավատարմագրման մասին օրենքը): Առաջնահերթությունների ոլորտի ընտրությունը դեռ ընթացքի մեջ է: Էկոնոմիկայի նախարարությունը համակարգում է որակի ենթակառուցվածքի ոլորտում աշխատող զարգացման տարբեր գործընկերների ջանքերը: 2009թ. հոկտեմբերին կազմակերպվեց ազգային որակի ենթակառուցվածքի իրազեկության մասին մի միջոցառում: Ավելի շատ առաջընթաց է պահանջվելու երկարաժամկետ հատվածում Համապատասխանության գնահատման և արդյունաբերական ապրանքների ընդունման համաձայնագրի (ACAA) շուրջ բանակցությունները սկսելու համար:

**Սանիտարական և ֆիտոսանիտարական** հարցերի ոլորտում Հայաստանը նախապատրաստել է մի ծրագիր և գործողությունների պլան 2009-2013թթ. պարենի անվտանգության համակարգի զարգացման վերաբերյալ: Հայաստանն ընդունել է փոփոխություններ ֆիտոսանիտարական օրենքում: Այն մի օրենք է նախապատրաստել պարենային հաստատությունների գրանցման մասին, ինչպես

նաև փոփոխություններ «Անասնաբուժության մասին օրենքում» և ուժեղացրել է իր լաբորատորիաները: Եվրոպական Հանձնաժողովի փաստահավաք խումբը 2009թ. փետրվարին ցույց տվեց, որ այս ոլորտում Հայաստանը պետք է եսկան առաջընթաց գրանցի: Սա հատկապես վերաբերում է համապատասխան հաստատությունների միջև համակարգմանն ու օրենսդրությանը:

Հայաստանում գործում են մի շարք օրենքներ **գործարար միջավայրի մասին, ձեռնարկությունների մասին օրենքը՝** ներառյալ Քաղաքացիական Օրենսգիրքը, բաժնետիրական ընկերությունների մասին օրենքը և Սահմանափակ ընկերությունների մասին օրենքը: Սակայն, չնայած որ գործող օրենսդրությունը բարձր է գնահատվում, համապատասխան օրենքների իրականացման հարցը մնում է խնդրահարույց: Ավելին, բացահայտվել են թափանցիկության և հայտարարագրման պահանջների հետ կապված թերացումները, ինչպես նաև ազգային պաշտոնական մամուլի օրգանի բացակայությունը: ՏՀԶԿ կորպորատիվ կառավարման սկզբունքների հետ համապատասխանությունը պետք է ապահովված լինի, կորպորատիվ կառավարման մարմինների գործառույթները, ինչպես նաև մեծամասնության և փոքրամասնության բաժնետերերի իրավունքները պետք է հստակորեն սահմանված լինեն և պետք է պատշաճ կերպով ապահովվեն ներդրողները, վարկատուները և փոքրամասնության բաժնետերերը: Կարողունակ և անկախ դատական կամ վարչական մարմինները պետք է նշանակված լինեն՝ մոնիտորինգի ենթարկելու որոշակի գործողությունների գրանցումները և օրինականությունը: Լավ առաջընթաց է նկատվել այս ոլորտում օրենքների արդյունավետ իրականացման ընթացիկ աշխատանքների, ինչպես նաև Կորպորատիվ Կառավարման Օրենսգրքի հետ կապված:

Հայաստանի **ֆինանսական ծառայությունների** ոլորտը մեծապես ազդվել է ֆինանսական և տնտեսական ճգնաժամից: Հայաստանի Կենտրոնական Բանկը (ՀԿԲ) շարունակեց իր ջանքերը՝ իրականացնելու արդյունավետ բանկային վերահսկողության Բազել II սկզբունքները: ԱՄՅ նկատեց, որ Հայաստանի բանկային ոլորտը առողջ է և լավ կապիտալիզացված, բայց տնտեսական անկունը կարող է ազդեցություն ունենալ վարկերի ռիսկայնության վրա, ինչպես արդեն արտացոլվել է չսպասարկվող փոխառությունների պարագայում: ՀԿԲ քայլեր է ձեռնարկել ապահովելու, որ այս ռիսկերը լավ կառավարվեն: Բանկային հատվածը ներկայացնում է ֆինանսական համակարգի ակտիվների ավելի քան 90%: Այս ոլորտի հիմնական դերակատարներն են մնում օտարերկրյա սեփականությամբ բանկերը՝ ընդհանուր բանկային կապիտալի մոտ 65-70%: Ավանդների երաշխիքների ոլորտում, 2009թ. փոփոխություններ են նախապատրաստվել «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների փոխհատուցման մասին օրենքում»: Կառավարությունում ներկայումս քննարկվում է կենսաթոշակային հիմնադրամների վերաբերյալ օրենսդրական փաթեթը և «Պարտադիր ապահովագրության մասին օրենքի» նախագիծը, առաջացած մեքենաների օգտագործման պատասխանատվությունից, ներկայումս քննարկվում է խորհրդարանում:

### *Այլ առանցքային ոլորտներ*

Առաջընթաց է գրանցվել **հարկման** ոլորտում: Ֆինանսների նախարարությունն աշխատել է Կոնսոլիդացված Հարկային Օրենսգրքի վրա: Հարկային վարչարարությունն արդեն իրականացրել է 2008-2011թթ. Հարկային վարչարարության ռազմավարությունում ներառված մի քանի միջոցառումներ: Ստեղծվել է հարկային հավաքագրումների գերագույն խորհուրդը՝ այս ոլորտում

առաջընթացը մոնիտորինգի ենթարկելու համար: Ընդունվել են էլ. հայտարարագրման ներդրման պլանները և ռիսկի վրա հիմնված ստուգումներում բարելավումներ են կատարվել: Մարդկային ռեսուրսների արդիականացման գործընթացը ներկայումս գտնվում է ընթացքի մեջ և ներառում է նաև նոր վերապատրաստման կենտրոնի ստեղծումը (և՛ հարկայինի, և՛ մաքսայինի համար): Հարկային վարչարարությունը լուծեց ԱԱՀ փոխհատուցումների ուշացման հետ կապված խնդիրները և վճարեց գոյություն ունեցող պարտքերը: Հայաստանը մշակեց և ընդունեց էլ. կառավարման համակարգի ներդրման մի ծրագիր և 18 աշխատանքային խմբեր ստեղծվեցին հարկային վարչարարության ավտոմատացմամբ զբաղվելու համար: 2009թ. Հայաստանը ներկայացրեց, որ ԵՄ 13 անդամ պետությունների հետ ուժի մեջ են մտել երկակի հարկումից խուսափելու համաձայնագրերը և մյուսների հետ դրանք ստորագրված են կամ բանակցվում են: ԱՀԿ հանդեպ ստանձնած իր պարտավորություններին համահունչ ԱԱՀ վերաբերող խտրական պրակտիկան և ծխախոտի ապրանքների վրա աքցիզային համակարգը պետք է վերացվի:

Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը շարունակել է իր աշխատանքը 2009թ.՝ ուժեղացնելու **մրցակցային քաղաքականության** իրավական և ինստիտուցիոնալ դաշտը: Այն իրավական դաշտի փոփոխությունների նոր նախագիծ է պատրաստել, որոնք ակնկալվում է, որ կընդունվեն 2010թ.: «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքի» նախորդ փոփոխությունների արդյունավետ իրականացումը, ներառյալ պետական օգնության տրամադրումը, լրացուցիչ ջանքեր է պահանջում իրականացման երկրորդական մեխանիզմների իրականացման գործում: Հանդուրժողականության ծրագրի իրականացման մասին օրենքի նախագիծը ներկայումս նախապատրաստման փուլում է: 2010թ. նախատեսվում է ԵՄ թվինինգ ծրագիրը, որը վերաբերում է պետական օգնությանն ու մրցունակության քաղաքականությանը:

2009թ. ապրիլին կառավարությունը հաստատեց **մտավոր սեփականության** հուսալի և արդյունավետ պաշտպանության իրականացման հայեցակարգային փաստաթուղթը: Այս փաստաթղթի իրականացման համար 2009թ. օգոստոսին հիմնադրվեց մի հատուկ հանձնաժողով էկոնոմիկայի նախարարության ներքո և այնտեղ ներառված էին իրավունների կրողների և համապատասխան ՀԿ-ների ներկայացուցիչները: Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանն աշխատեց նաև հեղինակային իրավունքի, աշխարհագրական անունների և ապրանքանշանների վերաբերյալ իր օրենսդրության փոփոխությունների վրա: Հայաստանը դեռ պետք է վավերացնի Բույսերի նոր տեսակների պաշտպանության միջազգային կոնվենցիան (UPOV կոնվենցիա): Տարվա ընթացքում սկսվել է մտավոր և հեղինակային իրավունքի գողության ու զեղծարարության վերաբերյալ մի հետազոտություն և այն դեռ ընթացքի մեջ է: Սակայն լրացուցիչ հավելյալ ջանքեր պետք է ներդրվեն ապահովելու օրենսդրության լավ կիրառումը՝ ուժեղացնելու իրավակիրառ մարմինների իրավասություններն ու վարչական կարողությունները՝ ներառյալ դատաիրավական համակարգը և բարձրացնելով մտավոր սեփականության վերաբերյալ իրազեկությունը հանրության և իրավունքատերերի շրջանում:

Հայաստանը շարունակել է աշխատանքները **պետական գնումների** վերաբերյալ նոր օրենսդրության ուղղությամբ: Ակնկալվում է, որ ընդունելուց հետո այն ուժի մեջ կմտնի 2010թ. հունիսին: Նոր օրենքը նախատեսում է, որ Գնումների պետական գործակալությունը կդառնա Գնումների աջակցման կենտրոն:

Լրացուցիչ ջանքեր են պահանջվում էլ. գնումների իրականացման համար ուսուցման և համակարգերի տրամադրման ուղղությամբ:

**Հաշվապահության** ոլորտում Հայաստանն ավարտել է Միջազգային ֆինանսական հաշվետվության ստանդարտների (IFRS) թարգմանությունը: Հայաստանը սկսել է նաև բանակցությունները Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի հետ՝ նպատատակ ունենալով ստորագրել փոքր և միջին ձեռնարկությունների հաշվապահական ստանդարտների թարգմանության համաձայնագիրը: Ֆինանսների նախարարությունից անկախ հաշվապահության և աուդիտի համար պատասխանատու անկախ կարգավորիչ մարմնի ստեղծման վերաբերյալ առաջընթաց չկա:

**Վիճակագրության** առումով Հայաստանը 2009թ. հունիսին ընդունել է տնտեսական գործունեության ազգային դասակարգիչը: Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանն աշխատել է նաև տարածքային միավորների դասակարգման ազգային տարբերակի մշակման վրա և շարունակել է վիճակագրության ոլորտում ԵՄ հիմնական կանոնակարգերի հայերեն թարգմանությունը:

**Ձեռնարկությունների քաղաքականության** ոլորտում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ազգային կենտրոնը (ՓՄՁ ՁԱԿ) շարունակել է աջակցել ՓՄՁ-ներին՝ պետական բյուջեից հատկացված միջոցներով ծրագրերի իրականացման միջոցով: 2008թ. սկսած, Եվրոպայի ձեռնարկությունների ցանցին (EEN) անդամակցությունից ի վեր, ՓՄՁ ՁԱԿ-ն ընդունում է EEN նամակագրության կենտրոնին՝ բիզնեսի, նորամուծության, տեխնոլոգիայի և հետազոտությունների հետ կապված ծառայություններ տրամադրելով հայկական ընկերություններին, աջակցելով նաև հայկական շուկայում գործարար հնարավորություններ որոնող եվրոպական ՓՄՁ-ներին: 2009թ. ընդունված՝ ՓՄՁ-ների օրենսդրության մի քանի փոփոխություններ են ուժի մեջ մտել հաշվետու ժամանակահատվածից հետո՝ 2010թ. հունվարին:

**Ներքին պետական ֆինանսական վերահսկողության (PIFC)** ոլորտում Հայաստանը շարունակել է աշխատել ներքին աուդիտի օրենքի վրա: Օրենքի նախագիծը ներառում է ներքին աուդիտի կենտրոնական ներդաշնակեցման գործառույթի ապահովում: Ներկայիս PIFC միջավայրի թերությունների մանրամասն գնահատումից հետո, ֆինանսների նախարարությունը սկսել է PIFC քաղաքականության փաստաթղթի մշակման աշխատանքները: Ղեկավարության հաշվետվողականության սկզբունքների ներդրումը դեռ շատ վաղ փուլում է գտնվում: Արտաքին աուդիտի հետ կապված՝ Վերահսկիչ պալատը կապեր է հաստատել եվրոպական SAI-երի հետ, որպեսզի մշակի գործող աուդիտի պրակտիկան՝ INTOSAI ստանդարտներին համահունչ:

## **5. Համագործակցություն արդարադատության, ազատության և անվտանգության ոլորտում**

Հայաստանը շարունակեց մասնակցել Հարավային Կովկասում ինտեգրված սահմանների կառավարման (SCIBM) տարածաշրջանային ծրագրին՝ ֆորմալ համաձայնեցված Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի միջև 2007թ.: Ծրագիրը նպատակ ուներ ուժեղացնել մաքսային և սահմանային ծառայությունների միջգերատեսչական համագործակցությունը, վերապատրաստումը և կարողությունները՝ տարածաշրջանային և ԵՄ նորմերին համահունչ: Ի հեճուկս այս ծրագրի տարածաշրջանային բնույթի՝ Ադրբեջանն ընտրեց շարունակել



համագործակցությունը միայն Վրաստանի հետ իր երկկողմանի բաղադրիչի միջոցով, որն ուշացրեց իրականացումը մինչև 2010թ. մարտ: Սակայն, SCIBM շրջանակներում Հայաստանի մաքսային և սահմանային ծառայությունները Ադրբեջանի և Վրաստանի մասնակիցների հետ միասին մասնակցեցին նախապատրաստական վերապատրաստման դասընթացներին Ավստրալում, Խորվաթիայում, Իտալիայում և Սլովենիայում:

Լրացուցիչ ուսուցում տրամադրվեց սահմանային և պարեկային ոստիկանությանը՝ ներառյալ անդրսահմանային սեմինարների Վրաստանի և Ադրբեջանի սահմանային պաշտոնյաների հետ միասին՝ համագործակցելով ԵԱՀԿ հետ:

**Միգրացիայի** պետական ծառայությունը սկսեց միգրացիայի և ապաստարանի ազգային գործողությունների ծրագրի աշխատանքը քաղաքացիական հասարակության հետ համագործակցությամբ և ԵՄ աջակցությամբ՝ միգրացիայի կանոնակարգման ռազմավարության նախագծի աշխատանքը: 2008թ. նախապատրաստված «Աշխատանքային միգրացիայի մասին օրենքի» նախագիծը դեռ չի ընդունվել: Ի լրումն, դեռ պետք է ստեղծվի միգրացիոն հոսքերի մոնիտորինգի տվյալների բազան: ԵԱՀԿ և Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM) աջակցությամբ Հայաստանը մշակում է բիոմետրիկ բնորոշումներով էլեկտրոնային անձնագրերի և էլեկտրոնային անձը հաստատող փաստաթղթերի ներդրման գործողությունների ծրագիրը: Փաստաթղթերի անվտանգության բարելավումը իշխանությունների կողմից համարվում է ԵՄ հետ մուտքի արտոնագրերի ստացման հեշտացման գործընթացն արագացնելու մի անհրաժեշտ քայլ:

**Կազմակերպված հանցագործությունների** առումով Հայաստանը դեռ պետք է միանա Ձեռքերի, դրանց մասերի և բաղադրիչների անօրինական արտադրման և թրաֆիկինգի անդրազգային կազմակերպված հանցագործության դեմ պայքարի Միացյալ Ազգերի կոնվենցիայի երրորդ արձանագրությանը և խրախուսվում է ստորագրել և վավերացնել 2007թ. Եվրոպայի Խորհրդի սեռական շահագործումից և սեռական չարաշահումից երեխաների պաշտպանության Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան:

**Մարդկանց թրաֆիկինգի հետ կապված** պետական բյուջեն հատկացրել է մոտ 100,000 Եվրո՝ ֆինանսավորելու դրաֆիկինգի դեմ պայքարի միջոցառումները, ներառյալ ազգային ուղեգրման մեխանիզմի և թրաֆիկինգի զոհերի համար հատուկ կազարանի ստեղծումը՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությամբ: 2009թ. գրանցվել է մարդկանց թրաֆիկինգի հետ կապված հանցագործությունների 11 առանձին քրեական հետապնդումներ:

Ինչպես արդեն նշվեց, Հարավային Կովկասում թմրանյութերի դեմ պայքարի ծրագիրն (SCAD V) ավարտվեց 2009թ.: Քննարկումներ են ընթանում, թե ինչպես է հնարավոր լավագույնս հասնել արդյունքների և **անօրինական թմրանյութերի դեմ պայքարի** տարածաշրջանային ջանքեր ներդնել:

**Փողերի լվացման** հետ կապված, Moneyval-ը սեպտեմբերին հաստատել է Հայաստանի երրորդ շրջանակային փոխադարձ գնահատման զեկույցը, որը ներկայացնում է 2008թ. փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրավական դաշտի բարելավումները: Ձեկույցը հրապարակվեց 2010թ. հունվարին: Ինչպես նշվեց անցյալ տարի, փողերի լվացման, կոռուպցիայի և

ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված մարդկային և տեխնիկական ռեսուրսների զարգացումը դեռ խնդրահարույց հարց է մնում:

**Ոստիկանության և դատաիրավական համագործակցության** ոլորտում 2009թ. մարտին Հայաստանը վավերացրեց 1997թ. Քրեական գործերով փոխադարձ աջակցության եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը: Սակայն դրա արդյունավետ իրականացումը շարունակական ջանքեր կապահանջի բարելավելու բոլոր իրավապահ մարմինների միջև համակարգումն ու համագործակցությունը, ներառյալ ներդրումներն ուսուցման մեջ: Հայաստանը մի ավելի վաղ փուլում վավերացրեց Անդրսահմանային կազմակերպված հանցագործության դեմ պայքարի ՄԱԿ կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, բայց դեռ ստորագրված չէ Ձեռքերի, դրանց մասերի և բաղադրիչների ու զինամթերքի անօրինական արտադրման և թրաֆիկինգի անդրազգային կազմակերպված հանցագործության դեմ պայքարի Միացյալ Ազգերի կոնվենցիայի երրորդ արձանագրությունը: Միջազգային դատաիրավական համագործակցության Հաագայի երկու կարևոր կոնվենցիաներ, 1965թ. փաստաթղթերի ծառայության կոնվենցիան և 1970թ. ապացույցների վերցման կոնվենցիան Հայաստանը դեռ չի ստորագրել:

**Տվյալների պաշտպանության** հետ կապված 2009թ. Հայաստանը դեռ չի ստորագրել ոչ 1981թ. Անհատական տվյալների ավտոմատ մշակման հետ կապված անձանց պաշտպանության կոնվենցիան և ոչ էլ Վերահսկիչ իրավասու մարմինների և անդրսահմանային տվյալների հետքերի լրացուցիչ արձանագրությունը:

## **6. Տրանսպորտ, շրջական միջավայր, տեղեկատվական հասարակություն, գիտական հետազոտություններ**

2009թ. հոկտեմբերին Հայաստանն ընդունեց 2009-2020թթ. **տրանսպորտի** ոլորտի զարգացման ռազմավարությունը: Ռազմավարությունը նախատեսում է բարելավված կառավարում, ենթակառուցվածքներ և տեխնոլոգիաներ՝ առավելագույնի հասցնելու տրանսպորտի ոլորտի կատարողականը մինչև 2020թ. և նախատեսում է երկարաժամկետ բարգավաճում՝ արդյունավետ, ծախսարդյունավետ և բնապահպանորեն ու սոցիալապես կենսունակ տրանսպորտային ենթակառուցվածքների և ծառայությունների ստեղծման միջոցով: Ռազմավարությունը նախատեսում է կարգավորիչ և վերահսկման գործառույթների տարանջատում՝ ապահովելով կարգավորիչ գործառույթների անկախություն: Քաղաքականության հետագա կարճաժամկետ առաջնահերթությունները պետք է մի ճանապարհային ռազմավարություն սահմանեն, հիմնված ակտիվների կենսունակ կառավարման վրա, անդրադառնալով ճանապարհների անվտանգության վատթարացմանը, ինչպես նաև Երևանի քաղաքավող քաղաքային տրանսպորտին:

Ենթակառուցվածքներում ներդրումների հետ կապված Հայաստանը 2009թ. Համաշխարհային բանկի հետ միասին սկսել է արդիականացնել «Կյանքի ճանապարհների ցանցին» պատկանող ճանապարհների արդիականացումը: Հայաստանի ճանապարհների տնօրինության կարողություններն ուժեղացվում են: Արդեն 2004թ. Հայաստանը որոշել էր, որ յուրաքանչյուր համայնք պետք է միջպետական ճանապարհին կապող առնվազն մի կապող ճանապարհ ունենա: Այս ճանապարհները կազմում են Հայաստանի ոչ քաղաքային 7,704 կմ

ճանապարհների 3,014 կմ և սահմանված են, որպես գյուղական համայնքները միջպետական մայրուղիներին կապող օպտիմալ ճանապարհային ցանց:

Օդային ոլորտում 2009-2020թթ. տրանսպորտային ռազմավարությունը նախատեսում է մի կարճաժամկետ առաջնահերթություն՝ վերացնելու սահմանափակող առևտրային և կարգավորիչ միջոցառումները, որպեսզի բարելավվեն ավիացիոն արդյունավետությունն ու կապը: Հորիզոնական օդային ծառայությունների համաձայնագրի ստորագրումից հետո, որը տեղի ունեցավ անցյալ տարի, տրանսպորտային ոլորտում ԵՄ և Հայաստանի միջև ավելի սերտ կապեր հաստատելու ուղղությամբ մեկ այլ կարևոր քայլ էր 2009թ. հուլիսին Հայաստանի իշխանությունների և Եվրոպական ավիացիայի անվտանգության գործակալության միջև աշխատանքային համաձայնագրի ստորագրում՝ ուժեղացնելու դրա կարգավորիչ համագործակցությունը գործակալության և և առաջընթացը եվրոպական անվտանգության ստանդարտների հետ մերձենալու գործում: Սահմանափակ մրցակցության պատճառով ԵՄ և Հայաստանի միջև օդային հաղորդակցությունը, չնայած որ ավելանում է, դեռ սահմանափակ է մնում:

Հայաստանն ավելի շատ է իրականացրել իր **էներգետիկ** ռազմավարությունը՝ *հ շարք այլոցի* ավարտելով այն ընկերության ընտրության մրցույթը, որը վերահսկելու է նոր ատոմակայանի շինարարության գործընթացը: 2009թ. հոկտեմբերին Հայաստանն ընդունեց «Նոր ատոմակայանի շինարարության մասին օրենքը»: Ներկայումս նախապատրաստվում է կայանի շինարարի ընտրության մրցույթը: Հայաստանը նախատեսում է փակել Մեծամորի ատոմակայանը (MNPP) մինչև 2016թ. և պատրաստ է փակել կայանը մինչև սահմանված ժամկետը, եթե այլընտրանքային փոխարինող կարողություն չլինի: ԵՄ շարունակել է խնդրել դրա փակումը մինչև նշված ամսաթիվը: Հայաստանը շարունակեց MNPP անվտանգության արդիականացումը՝ իր 2009-2016թթ. ծրագրի հիման վրա: Այն շարունակեց աշխատանքը սպառված միջուկային վառելիքի և ռադիոակտիվ կառավարման ռազմավարության ուղղությամբ և առաջընթաց գրանցեց սպառված վառելիքի պահուստավորման շինության ընդլայնման ուղղությամբ: Հայաստանը լրացուցիչ քայլեր ձեռնարկեց նախապատրաստելու MNPP շահագործման դադարեցման մի մանրամասն ծրագիրը: Այն շարունակեց լրացնել Ատոմակայանի շահագործման դադարեցման հիմնադրամը և ուսումնասիրել, Ռուսաստանի Դաշնության հետ միասին, ուրանի պահուստները:

2009թ. ապրիլին Հայաստանը բարձրացրեց գազի և էլեկտրաէներգիայի սակագները՝ գազի գնի բարձրացումից հետո: Այն շարունակեց սովորական էլեկտրաէներգիայի արտադրության կայանների (ներառյալ հիդրո) կառուցումը և էլեկտրաէներգիայի ու գազի ենթակառուցվածքների վերականգնումը: Հայաստանը շարունակեց Վրաստանի և Իրանի հետ լրացուցիչ էլեկտրաէներգիայի կապի նախապատրաստման աշխատանքները: 2009թ. մարտին Հայաստանը համաձայնություն ձեռք բերեց Թուրքիայի հետ էլեկտրաէներգի արտահանել՝ էներգետիկ համակարգի արդիականացումից հետո: 2009թ. մայիսին գործարկվեց Հայաստան-Իրան գազատարը: Երկու երկրների միջև գործարքը նպատակ ունի գազ արտահանել Հայաստան և էլեկտրաէներգիա Իրան: 2009թ. ապրիլին Հայաստանն ու Իրանը հաստատեցին նավթավերամշակման գործարան կառուցելու իրենց ծրագիրը: Հայաստանը շարունակեց էներգետիկ արդյունավետության և վերականգնողական էներգետիկայի ծրագրի զարգացումը:

**Կլիմայի փոփոխության** ոլորտում Հայաստանը շարունակեց Կլիմայի փոփոխության ՄԱԿ շրջանակային կոնվենցիայի (UNFCCC) իր երկրորդ ազգային

զեկույցի նախապատրաստումը, որը կներառի ջերմոցային գազերի գույքագրումը, մեղմացումը և ադապտացման միջոցառումները: Ջրային ռեսուրսների խոցելիության զեկույցն արդեն նախապատրաստվել է: Քայլե են ձեռնարկվել անդրադառնալու լեռնային անտառային էկոհամակարգերում կլիմայի փոփոխության ազդեցություններին ադապտացնելու ուղղությամբ: Գնահատվել է կլիմայի փոփոխության սոցիալ-տնտեսական ազդեցությունը գյուղատնտեսության, էներգետիկայի և անտառտնտեսության առումով ու քաղաքականության առաջարկություններ ու միջոցառումներ են մշակվել: Մի շարք միջազգային պարտավորությունների իրականացման 2004թ. կառավարության որոշման UNFCCC-ի հետ կապված մասը վերանայվել է 2009թ. դեկտեմբերին և այն գտնվում է հաստատման գործընթացում:

Հայաստանը քայլեր է ձեռնարկել նախապատրաստելու և հաստատելու Ջարգացման մաքուր մեխանիզմների (CDM) ավելի շատ ծրագրեր: Այս տեսակ նոր ծրագրերից մեկը գրանցվել էր ՄԱԿ մակարդակով՝ ընդհանուր գրանցված ծրագրերի քանակը հասցնելով հինգի: Հայաստանն ասոցացվել է Կոպենհագենի համաձայնագրին և տեղեկատվություն է տրամադրել իր կողմից իրականացվելիք գործողությունների վերաբերյալ: Եվրոպական հանձնաժողովը շարունակեց օժանդակել Հայաստանին՝ իրականացնելու Կիոտոյի արձանագրությունը:

Հայաստանը սկսեց իրականացնել իր **բնապահպանական** գործողությունների ծրագիրը 2008-2012թթ. համար, *ի շարք այլոց* կապված օրենսդրական դաշտի զարգացման, բնապահպանական մոնիտորինգի կարողությունների ձևավորման և թափոնների ու քիմիական նյութերի կառավարման ուժեղացման հետ: Օրենսդրական դաշտը լրացուցիչ մշակման կարիք ունի, հատկապես կապված իրականացման օրենսդրության հետ կապված: Օդի որակի, ջրի կառավարման և բնապահպանական վարձավճարների ոլորտներում օրենսդրության փոփոխություններ են կատարվել: Կառավարության որոշում է ընդունվել՝ կանոնակարգելու այն ընկերությունների գրանցման գործընթացը, որոնց գործունեությունը բացասական ազդեցություն ունեն շրջակա միջավայրի վրա և լրացուցիչ որոշումներ են ընդունվել ջրի, բնապահպանության, քիմիական նյութերի և թափոնների ոլորտում: Դեռ նախապատրաստման փուլում են գտնվում շրջակա միջավայրի պաշտպանության, ինչպես նաև բնապահպանական փորձագիտության, գենետիկ փոփոխության ենթարկված օրգանիզմների և համապատասխանության ինքնամոնիտորինգի հետ կապված օրենսդրական ակտեր:

Հաստատվել է քիմիական նյութերի և թափոնների կառավարման ազգային ծրագիրը: Մեկնարկել է մարդկային առողջության և շրջակա միջավայրի վրա վտանգավոր նյութերի ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության նախապատրաստումը: Շարունակական ուշադրություն է պահանջվում՝ իրականացնելու գործող ռազմավարություններն ու ծրագրերը՝ ավելի ուժեղացնելու մոնիտորինգն ու կիրառումը:

Որոշ քայլեր են ձեռնարկվել՝ նպատակ ունենալով ուժեղացնել ջրային ռեսուրսների կառավարումը: Լուրջ խնդիր է մնում երկրի բոլոր մակարդակներում վարչական կարողությունների ուժեղացումը: Իշխանությունների միջև համակարգումը շարունակում է ուշադրություն պահանջել: Որոշ աշխատանքներ են կատարվել՝ խթանելու բնապահպանական խնդիրների ինտեգրումը այլ քաղաքականությունների մեջ, ինչպիսիք են տրանսպորտը: Որոշ քայլե են

ձեռնարկվել՝ նախապատրաստելու ինտեգրված թույլատվության վերաբերյալ օրենսդրությունը:

Բնապահպանական զեկույցների նախապատրաստման հետ կապված ոչ մի էական զարգացում տեղի չի ունեցել: Այնուհանդերձ, Հայաստանը շարունակել է որոշ այլ աշխատանքներ իրականացնել հասարակությանը տեղեկատվություն տրամադրելու համար: *(Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի համար տես գլուխ 2):*

Ներկայումս նախապատրաստվող համապատասխանության ինքնամոնիտորինգի օրենսդրության նախագիծը պարունակում է շրջակա միջավայրի ազդեցության գնահատման դրույթներ՝ ներառյալ հանրային մասնակցության վերաբերյալ: Շրջակա միջավայրի գնահատման համատեքստում հանրության հետ խորհրդակցություններն ու գործընթացները շարունակում են հատուկ ուշադրություն պահանջել: Եսփուլ կոնվենցիայի իրականացման կոմիտեն խնդրել է Հայաստանին վերանայելու իր շրջակա միջավայրի գնահատման օրենսդրությունը, կոնվենցիայի հետ համապատասխանելու համար, ինչիպես նաև այս հարցով իրեն զեկուցել: Ավելի ուշ Հայաստանը ներկայացրեց մի բավարար իրականացման ռազմավարություն:

Հայաստանը որոշ քայրել է ձեռնարկել Երկար տարածության վրա օդի ախտոտման UNECE կոնվենցիայի EMEP<sup>1</sup> արձանագրությանն անդամակցելու ուղղությամբ: Մնացած համապատասխան UNECE կոնվենցիաներին և արձանագրություններին անդամակցության կամ դրանց վավերացման հետ կապված ոչ մի էական զարգացում տեղի չի ունեցել<sup>2</sup>: Ավելին, մի քանի արդեն վավերացված համաձայնագրերի իրականացումը հատուկ ուշադրություն է պահանջում: Հայաստանը մասնակցել է ԵՄ Ջրային նախաձեռնությանը, ներառյալ ազգային երկխոսության ռազմավարությունը:

Եվրոպական հանձնաժողովի և Հայաստանի միջև տեղի է ունեցել համագործակցություն և տեղեկատվության փոխանակում, ներառյալ ջրի, անտառ-տնտեսության, թափոնների կառավարման, բնապահպանական տվյալների, բնապահպանության և օդի որակի վերաբերյալ:

**Քաղաքացիական պաշտպանության** ոլորտում Հայաստանը 2009թ. դեկտեմբերին մասնակցեց տեխնաժին և բնական վտանգների կանխարգելման, պատրաստվածության և արձագանքման Արևելյան Գործընկերության առաջնային նախաձեռնության միջոցառման սկսմանը:

**Տեղեկատվական հասարակության** ոլորտում կարգավորիչ բարեփոխումների նախապատրաստմանն օգնելու համար, հաղորդակցման հարցերի կարգավորման աշխատանքային խմբի առաջին ժողովը տեղի ունեցավ Տրանսպորտի և

<sup>1</sup> Եվրոպայում երկար տարածության վրա օդի ախտոտիչների մոնիտորինգի և գնահատման համագործակցային ծրագրի երկարաժամկետ ֆինանսավորման արձանագրությունը (EMEP):

<sup>2</sup> Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի ազդեցության գնահատման UNECE կոնվենցիայի ռազմավարական շրջակա միջավայրի գնահատման արձանագրությունը, Անդրսահմանային ջրային հոսանքների և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման UNECE կոնվենցիան և այլ համապատասխան արձանագրություններ:

Հեռահաղորդակցության Նախարարության շենքում 2009թ. հունիսին: Պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչներն ու պատասխանատու ղեկավարները մասնակցեցին այս ժողովին:

2009թ. փետրվարին ութ ներքին օպերատորներին տրվեց հանրային ցանցի թվային կարողություններ և կողեր՝ Հայաստանում ֆիքսված հեռախոսակապ առաջարկելու համար: Յուրաքանչյուր ընկերության ցանցը կկապվի ներկայիս *դե ֆակտո* մոնոպոլիստի հետ:

**Աուդիովիզուալ** ոլորտում այլ երկրներից եկող հեռուստատեսային հեռարձակման ընդունման և վերահեռարձակման ազատությունը դեռ դժվար է, քանի որ Հայաստանը չի վավերացրել Եվրոպայի Խորհրդի անդրսահմանային հեռուստատեսության կոնվենցիան:

Հայաստանի **հետազոտական** ներդրումներն ու կարողությունները մնում են համեմատաբար համեստ: Սակայն մասնակցությունը 7-րդ Շրջանակային ծրագրին (FP7) ավելացել է՝ համեմատած FP6 հետ, 17 հետազոտական կազմակերպություններ հաջողության են հասել իրենց դիմումներում 2009թ. նոյեմբերի դրությամբ՝ ստանալով ԵՄ 690,000 եվրո ֆինասավորում, հատկապես «միջազգային համագործակցություն» տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաներ և «Մարի Կյուրի» առաջարկությունների շրջանակում:

Հայաստանը շարունակել է ակտիվորեն մասնակցել Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջազգային S&T համագործակցային ցանցին (FP7 IncoNet EECA ծրագիր), որը նպատակ ունի աջակցել երկտարածաշրջանային EU-EECA քաղաքականության երկխոսությանը գիտության և տեխնոլոգիայի ոլորտում և ավելացնել EECA մասնակցությունը FP7-ում:

## 7. Մարդկային շփումներ, կրթություն և առողջապահություն

**Բարձրագույն կրթության** ոլորտում Կրթության և Գիտության Նախարարությունը համալսարանների մասնակցությամբ հինգ աշխատանքային խմբեր է հիմնել՝ խթանելու բոլոնյան գործընթացի պահանջները, որոնք ներառում են որակավորումների շրջանակները, կրեդիտների կուտակումը, ֆինանսական կառավարումը, որակի ապահովման մեխանիզմները և հետբուհական կրթությունը: Բոլոնիայի գործընթացի դիպլոմների փոխլրացումը, ավելի մեծ թափանցիկություն ապահովելով բարձրագույն կրթության որակավորումների ուղղությամբ, Հայաստանի համալսարաններում և բարձրագույն կրթության հաստատություններում ներդրվեց 2009թ. ընթացքում:

Հայաստանը շարունակեց իր ակտիվ մասնակցությունը «Erasmus Mundus» կրթաթոշակային ծրագրում, ինչպես նաև Tempus IV ծրագրում՝ ավելացնելով Tempus III հետ համեմատած:

Տասներեք հայ ուսանողներ և մեկ գիտական աշխատող ստացան «Erasmus Mundus» մագիստրոսի դասընթացների կրթաթոշակներ 2009-10թթ. ակադեմիական տարվա համար «Erasmus Mundus Action 1» շրջանակներում, մինչդեռ ակադեմիական և ուսանողական շարժունակությունն ավելի խթանվեց «Erasmus Mundus Action 2» շրջանակներում նույն ժամանակահատվածում՝ 35 շարժունակության դրամաշնորհների տրամադրման միջոցով: Հայաստանի համալսարանները քաջալերվում են մասնակցել «Jean Monnet» ծրագրին:

Մասնագիտական կրթության և զարգացման առումով 2009թ. զարգացումները կենտրոնացել են focused 2008թ. նախաձեռնված ուսուցիչների վերապատրաստման, մասնագիտական ուսուցման քոլեջների վերանորոգման և որակաորումների չափորոշիչների և ԵՄ էական աջակցությամբ որակավորումների ազգային շրջանակի ոլորտում բարեփոխումների կոնսուլիդացման և շարունակման վրա (տես գլուխ 8): Մասնագիտական կրթության և վերապատրաստման ոլորտում սոցիալական գործընկերության և ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման հայեցակարգերը կառավարության օժանդակությունը ստացան հոկտեմբերին: Կրթության և Գիտության Նախարարությունը շարունակեց մշակել որակավորումների ազգային շրջանակը՝ Մասնագիտական կրթության և վերապատրաստման զարգացման ազգային կենտրոնի կողմից մշակված կարողունակությունների վրա հիմնված չափորոշիչների հիման վրա:

**Մշակույթի** Նախարարությունը շարունակեց Մշակույթի զարգացման քառամյան ռազմավարության (2008-12թթ.) իրականացումը՝ կենտրոնանալով մշակութային քաղաքականության, մշակութային ժառանգության, միջազգային համագործակցության, ոչ նյութական մշակույթի թվայնացման և հանրամատչելի մշակույթի խթանման արդյունավետ համակարգման վրա: Ինչպես նշված էր այս առումով 2008թ., ուշադրությունը պետք է ուղղվի մշակութային քաղաքականության արդյունավետ ապակենտրոնացման խթանմանը՝ ապահովելով առավելագույն քաղաքացիական և երիտասարդական մասնակցությունը ռազմավարության իրականացմանը: Հայաստանի մշակութային կազմակերպությունները մասնակցեցին 2009թ. ԵՀԹ մշակութային ծրագրի հատուկ գործողությունների առաջարկների հրավերին:

Հայ երիտասարդները և **երիտադարդական** կազմակերպությունները շարունակեցին օգտվել Երիտասարդությունը գործողության մեջ ծրագրի ընձեռնած հնարավորություններից՝ փոխանակումների, կամավոր ծառայությունների և ոչ ֆորմալ կրթության մեջ երիտասարդական համագործակցության աշխատանքների միջոցով:

Հայաստանը շարունակել է **առողջապահական** ոլորտի բարեփոխումները, հատկապես առաջնային առողջապահության և առողջապահության առողջապահության ապահովագրման առումով: Բարեփոխումները պետք է նպաստեն ոչ ֆորմալ վճարումների կրճատմանը: 2009թ. կառավարությունը հաստատեց 2010-2015թթ. մանկական և պատանեական առողջության և զարգացման ռազմավարությունն ու գործողությունների ծրագիրը: ՄԻԱՎ/ՉԻԱՀ և տուբերկուլյոզի պես վարակիչ հիվանդությունները մնացին խնդրահարույց: 2009թ. հոկտեմբերին Հայաստանը մասնակցեց նորաստեղծ ԵՄ ընդլայնված առողջապահական տեղեկատվական հանձնաժողովին:

## **8. Ֆինանսական համագործակցություն – 2009թ. հիմնական փաստերն ու թվերը**

Հայաստանի համար Եվրոպական հարևանության քաղաքականության գործիքի (ENPI) փաթեթը 2007-2010թթ. Ազգային ցուցանիշ ծրագրի շրջանակներում կազմում է 98.4 միլիոն եվրո: Ծրագիրը կենտրոնացած է երեք առաջնահերթ ոլորտների վրա՝ 1) ժողովրդավարական կառուցվածքների և լավ պետական կառավարման ուժեղացում, 2) կարգավորիչ բարեփոխումներ և վարչական կարողությունների ձևավորում ու 3) աղքատության նվազեցման ջանքեր:

Մասնագիտական կրթության և ուսուցման 2007թ. գործողությունների տարեկան ծրագիրը (16 միլիոն եվրո) գտնվում է իրականացման վերջնական փուլում: 2007թ. ոլորտային ծրագիրը լավ առաջընթաց է ունեցել և դրա պլանավորված գործողություններն ավարտվեցին 2009թ. վերջին: Երկրորդ (և վերջնական) ֆիքսված չափաբաժնի վերջնական ստուգման առաքելությունը հետաձգվեց 2009թ. դեկտեմբեր՝ մատակարարման ուշացումների պատճառով: Հետևաբար, վերջնական վճարումը կատարվում է 2010թ. կիսամյակում: Ավելին, 5 միլիոն եվրո արժողությամբ «TA/twinning» փաթեթը, ի օժանդակություն կարգավորիչ բարեփոխումների և վարչական կարողությունների ձևավորման, ներկայումս գտնվում է իրականացման փուլում:

Ներկայումս ընթացքի մեջ է 2008թ. Արդարադատության բարեփոխումների աջակցության տարեկան գործողությունների ծրագրի (18 միլիոն եվրո) իրականացումը: 2008թ. Արդարադատության ծրագրի 8 միլիոն եվրո սկզբնական ֆիքսված մասնաբաժինը փոխանցվեց 2009թ. վերջին: Ներկայումս նախապատրաստվում է AAP 2008թ. «TA/twinning» 6 միլիոն եվրո արժողությամբ փաթեթը:

Առաջին թվինհինգ ծրագրից սկսվեց 2009թ. (աջակցություն օմբուդսմենին և մարդու իրավունքների պաշտպանին) և երկրորդը սկսվեց 2010թ. (Էկոնոմիկայի Նախարարությունում Ստանդարտ արժեքների մոդելի ներդրման աջակցություն): Անդամ պետությունների առաջարկների համար ներկայումս հրապարակվում են երեք թվինհինգ ծրագրեր (քաղաքացիական ավիացիա, մրցակցություն, ազգային վիճակագրություն):

2009թ. Եվրոպական հանձնաժողովը շարունակեց աջակցել բարեփոխումների ազգային ջանքերին Հայաստանում և աջակցություն նախատեսեց ընդհանուր 24.7 միլիոն եվրո գումարով՝ ENPI շրջանակներում: 2009թ. գործողությունների տարեկան ծրագիրը կենտրոնացավ հետագա տնտեսական զարգացման և սոցիալական համախմբվածության շարունակական աջակցության վրա: Այս փաթեթով 15 միլիոն եվրո հատկացվեց՝ շարունակելու մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումները, որպես ոլորտային բյուջետային աջակցություն: Լրացուցիչ 9.7 միլիոն եվրո հատկացվեց TA և թվինհինգ ծրագրերի համար:

Մոտ 157.3 միլիոն եվրոյի ֆինանսական փաթեթ կտրամադրվի Հայաստանում համագործակցային աշխատանքներին աջակցելու համար 2011-2013թթ.՝ 2010թ. մարտի Եվրոպական հանձնաժողովի որոշման վրա հիմնված:

Ի լրումն երկկողմանի հատկացումների, Հայաստանն օգտվեց նաև ENPI բազմաերկիր և տարածաշրջանային ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվող համագործակցային աշխատանքներից, ինչպիսիք են ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական գործիքը (EIDHR) և ոչ պետական դերակատարները և տեղական մարմինները զարգացման ծրագրերում (NSA/LA): Հայաստանը կարող է օգտվել նաև ENPI անդրսահմանային համագործակցության (CBC) սևծվյան ավազանի ծրագրի շրջանակներում համագործակցությունից:

Կայունության գործիքն անմիջական աջակցություն է տրամադրել հետընտրական կայունացման ջանքերի համար՝ ԵՄ խորհրդատվական խմբի ձևով՝ 2 միլիոն եվրո ընդհանուր բյուջեով: Ավելին, 2009թ. ԵՄ որոշում կայացրեց Հայաստանի



կառավարությանը մակրոֆինանսական աջակցություն տրամադրել՝ մեղմացնելու գլոբալ ֆինանսական ճգնաժամի ազդեցությունները: Փաթեթը ներառում է 65 միլիոն եվրո վարև և 35 միլիոն եվրո դրամաշնորհ: Ակնկալվում է, որ վճարումները կսկսվեն 2010թ. առաջին կեսին:

Հարևանության ներդրումների գործիքի (NIF) շրջանակներում 2009թ. Հայաստանում հաստատվեցին երկու ծրագրեր՝ տրամադրելով 14.6 միլիոն եվրո դրամաշնորհ և տեխնիկական աջակցություն և եվրոպական ֆինանսական հաստատությունների 23 միլիոն եվրո վարկը շրջակա միջավայրի և տրանսպորտի ոլորտների համար: Ավելին, 2009թ. հաստատվել են նաև երեք տարածաշրջանային ծրագրեր, որոնց իրավունքը Հայաստանն ուներ՝ տրամադրելով 24 միլիոն եվրո դրամաշնորհ: Սրանով եվրոպական ֆինանսական հաստատությունների վարկերը/ ներդրումները էներգետիկ և ֆինանսական հատվածներում կազմեցին ընդհանուր առմամբ 372 միլիոն եվրո:

Միջուկային անվտանգության աջակցության առումով 11 միլիոն եվրո արժողությամբ տեղում տրամադրվող աջակցության և Մեծամորի ատոմակայանին սարքավորումների տրամադրման ծրագրերը ներկայումս իրականացվում են Միջուկային անվտանգության համագործակցության գործիքի (INSC) 2009թ. գործողությունների ծրագրի շրջանակներում (ներառյալ Ազգային կարգավորչի աջակցությունը): Ընդհանուր 2.3 միլիոն եվրո արժողությամբ Հայաստանի միջուկային կարգավորիչ մարմնի անվտանգության մշակույթի բարելավմանն ուղղված երկու այլ ծրագրեր, ինչպես նախատեսված էին նախին գործողությունների ծրագրերով, դեռ ընթացքի մեջ են:

Եվրոպական ներդրումային բանկը ոչ մի վարկային ծրագիր Հայաստանի կառավարության հետ 2009թ. չի ստորագրել:

2009թ. ընդհանուր դոնորների համակարգումը առավելագույնս է կատարվել չորս հիմնական դոնորների համակարգման միջոցով (Համաշխարհային Բանկ, ԱՄՆ, ՄեՋՄԳ և ԵՀ) և Հայաստանի Էկոնոմիկային Նախարարության մասնակցությամբ: Սրանք ընդհանուր դոնորների համակարգման հանդիպումներ էին, որոնք կազմակերպվում էին առնվազն երեք ամիսը մեկ անգամ՝ հրավիրելով նաև այլ դոնորների: Գնալով՝ հայկական կողմը սկսեց փաստացի պատասխանատվություն ստանձնել դոնորների գործունեության համակարգման համար: